ԿԱՐԾԻՔ

Էլինա Կարենի Գեղամյանի «Բողոքարկման ինստիտուտը վարչարարությունում և վարչական դատավարությունում» վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության վերաբերյալ

Բողոքարկման ինստիտուտը ժամանակակից վարչական իրավունքում գիտագործնական էական նշանակություն ունի, այն անմիջականորեն կապված է պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի հետ, առանց որի խաթարվում է ժողովրդավարական հասարակությունում հանրային իշխանության հաշվետվողականության և վարչարարության արդյունքում խախտված իրավունքների վերականգնման առաքելությունը: Ինչպես իրավամբ նշում է Հեղինակը՝ հայրենական վարչարարության իրավատեսական հիմքերը Երկրի անկախացումից ի վեր անցել են այս ինստիտուտի ձևավորման և զարգացման մի քանի փուլերով, և չնայած դրա սահմանադրաիրավական խարսխվածությանը, ինստիտուտը մինչ օրս հայրենական իրավաբանական գրականությունում համապարփակ գիտական հետազոտության նյութ չի դարձել: Այս հանգամանքն ինքնին վեր է հանում ատենախոսության թեմայի արդիականությունը ոչ միայն ուսումնասիրվող հարցերի գիտական համարժեք հետազոտության անհրաժեշտության, այլև գործնական հարթությամբ վարչարարության բողոքարկման գործընթացին մասնակից սուբյեկտների գործունեության գիտահեն հիմքերի ապահովման տեսանկյունից, քանի որ վարչական մարմինների ու դատարանի գործունեության հիմքում բողոքարկման սուբյեկտների, օբյեկտների, բողոքարկման արդյունավետության վերաբերյալ գիտականորեն հիմնավորված և միատեսակ չափանիշների բացակայությունը պրակտիկայում հանգեցնում է իրավակիրառ պրակտիկայի անկայունության և ոչ կանխատեսելիության:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, որոնք բաժանված են ութ պարագրաֆի, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Հեղինակի կողմից ընտրված կառուցվածքն արդյունավետ և ամբողջական է. հետազոտությունը զարգանում է բողոքարկման ինստիտուտի ծագումից, զարգացման էվոլյուցիայից, տեսական

հիմքերից, իրացման շրջանակից ու պայմաններից դեպի բողոքարկման համատեքստում հանրային շահի պաշտպանության հիմնահարցեր և, ի վերջո, դեպի ինստիտուտի գործնական արդյունավետության գնահատում և այդպիսի արդյունավետության երաշխավորման ապահովում, ինչը ապահովել է ատենախոսության ներքին տրամաբանական կառուցվածքը և դրա գիտական ու գործնական շերտերի փոխկապակցվածությունը:

Գիտական նորույթի գնահատականը: Ատենախոսության շրջանակում առաջադրված և որպես գիտական նորույթ առանձնացված դրույթներից առանձնապես կարևորում և արժեքավոր ենք համարում հետևյալները.

Նախ, վարչարարության բողոքարկման սուբյեկտների «իրավական շահագրգռվածության» որոշման եռաստիճան թեստը (իրական, կոնկրետ և նշանակալի ազդեցություն), որը գիտականորեն ինքնուրույն, հիմնավորված և անհրաժեշտ չափով մշակված, ներքուստ համահունչ և գործնականում կիրառելի կառուցակարգ է, որը կարող է անմիջական նշանակություն ունենալ դատական պրակտիկայի համար:

Բարենպաստ վարչական ակտը պատճառաբանական մասով բողոքարկելու հնարավորության ապահովման անհրաժեշտության և այդպիսի դեպքերում ապացուցման բեռի բաշխման առանձնահատուկ կանոնի նախատեսման վերաբերյալ Հեղինակի եզրահանգումը լրացնում է հայրենական վարչական իրավունքի և դատավարության համակարգում այս առնչությամբ առկա բացը, ներկայացված է գիտականորեն հիմնավորված ու համոզիչ կերպով, ինքնուրույն և ինքնատիպ հիմնավորումներով:

Գիտական նորույթի տեսանկյունից առանձին արժևորման արժանի է ատենախոսության 3-րդ գլխի 1-ին պարագրաֆում Հեղինակի կողմից առաջարկվող՝ վարչարարության բողոքարկման արդյունավետության գնահատման՝ Հեղինակի կողմից մշակված՝ յոթ պայմաններից կազմված մոդելը (գործառութային ինքնուրույնություն, կազմակերպական առանձնացվածություն, վերջնական լուծում տալու լիազորություն և այլն), որը ոչ միայն բավարարում է գիտական նորույթի չափանիշներին, այլև առանձնանում է բազմաշերտ ու խորը վերլուծությամբ, այդ թվում՝ Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական

կոնվենցիայի և ՄԻԵԴ պրակտիկայի համակարգային և գիտական վերլուծությամբ և ունի գիտական ու գործնական կարևոր նշանակություն:

Ատենախոսության 1-ին գլխում ներկայացված՝ վարչարարության բողոքարկման ինստիտուտի ծագման և էվոլյուցիայի պատմական վերլուծությունը, ընդգրկելով ինչպես հռոմեական «provocatio/appellatio» համակարգը, այնպես էլ իսլամական մազալիմ դատարանները, չինական Ցենզորատը և հասնելով մինչ բողոքարկման ինստիտուտի ժամանակակից իմաստով ձևավորում ու նոր մարտահրավերներ, ոչ միայն գիտականորեն հիմնավորված է, այլև իրականացնում է կարևոր մեթոդաբանական գործառույթ՝ հստակորեն տարանջատելով ու հիմնավորելով ոչ միայն ինստիտուտի գոյությունը տարբեր ժամանակահատվածներում և դրա ունեցած բովանդակությունը, այլև դրա զարգացման փուլերը վերլուծության ենթարկելով դրա իրավաբանական բնույթից՝ իրավունքների պաշտպանությանն ուղղված լինելուց ելնելով, ինչը հատկապես արժեքավոր է խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանի վերլուծության համատեքստում: Հեղինակի այս վերլուծությունը ատենախոսության հետագա շարադրանքի մեթոդաբանական հիմքն է, հատկապես ատենախոսության 3-րդ գլխի 1-ին պարագրաֆում քննարկվող՝ վարչարարության բողոքարկման արդյունավետության մոդելի տեսանկյունից:

Միաժամանակ, կարծում ենք, թեզը զերծ չէ որոշ թերություններից, որոնց առնչությամբ ստորև ներկայացվում են ատենախոսության առնչությամբ մեր նկատառումները.

1. Ատենախոսության 2-րդ գլխի 3-րդ պարագրաֆում Հեղինակն առաջարկում է ՀՀ վարչական դատավարությունում ներդնել «դատարանի ընկերոջ» («amicus curiae») ինստիտուտը՝ ի թիվս այլնի, հղում կատարելով նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածին և ՌԴ Սահմանադրական դատարանի «նախաձեռնողական գիտական կարծիքների» պրակտիկային, և հետազոտությունը չիրականացնելով այս ինստիտուտի՝ անգլոսաքսոնական համակարգից փոխառության համատեքստում: Միաժամանակ, Հեղինակն առաջարկում է քննարկվող ինստիտուտի ներդրման փուլային մոդել՝ սկզբնական շրջանում այն միայն Վճռաբեկ դատարանում կիրառելով, ապա միայն, դրա գործողության արդյունավետությունից ելնելով, քննարկելով ստորադաս դատարաններում: Աշխատանքն առավել կշահեր, եթե Հեղինակն անդրադառնար նաև այն

հարցին, թե իրավունքի հարցեր քննող Վճռաբեկ դատարանում կիրառվող ինստիտուտը նաև վարչական դատարանում կիրառելի դարձնելն արդյո՞ք ուղեկցվելու է այդ ինստիտուտի կիրառման շրջանակների փոփոխությամբ, թե՞, իր գնահատմամբ, պետք է շարունակի գործել ատենախոսությունում ուրվագծված շրջանակում:

2. Ատենախոսության երկրորդ գլխի առաջին պարագրաֆում Հեղինակն արձանագրել է հետևյալը. «Նկատի ունենալով, որ վարչարարության բողոքարկումը կարող է ուղղված լինել ոչ միայն մասնավոր, այլև հանրային շահի պաշտպանությանը, հանրային շահի պաշտպանությունը չի կարող նույնացվել միայն առանձին ոլորտում կամ սոցիալապես խոցելի առանձին խմբերի իրավունքների պաշտպանության առնչությամբ հարուցված հայցերի հետ:»: Հաջորդ պարագրաֆում առաջարկելով նաև հասարակական կազմակերպությունների կողմից վարչարարության բողոքարկման համատեքստում հանրային շահի պաշտպանությամբ իրական շահագրգռվածության չափանիշները, Հեղինակը քննարկման առարկա չի դարձրել այն հարցը, թե հանրային շահի պաշտպանությամբ վարչարարության բողոքարկման՝ իր կողմից առաջարկվող մոդելը հնարավորություն տալիս է արդյոք ապահովել նաև սոցիալապես խոցելի առանձին խմբերի իրավունքների պաշտպանությամբ վարչարարության բողոքարկումը: Մինչդեռ՝ հաշվի առնելով այն, որ Հեղինակը մանրամասն քննադատական վերլուծության է ենթարկել հանրային շահի պաշտպանությամբ վարչարարության բողոքարկումը միայն սոցիալապես խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության հետ կապելու վերաբերյալ գիտական մոտեցումները և միջազգային պրակտիկան, ատենախոսությունը կշահեր, եթե Հեղինակն անդրադառնար նաև իր կողմից առաջարկվող մոդելի և սոցիալապես խոցելի խավերի իրավունքների պաշտպանության հարաբերակցությանը:

3. Ատենախոսության երրորդ գլխի առաջին պարագրաֆում Հեղինակը մանրամասն քննարկման առարկա է դարձրել վարչարարության վարչական կարգով բողոքարկման արդյունավետությունը, ինչպես նաև վարչական կարգով բողոքարկման պարտադիրությունը՝ հատկապես արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի տեսանկյունից՝ առաջարկելով վարչարարության բողոքարկման արդյունավետության նոր մոդել: Ատենախոսության ուսումնասիրությունից, սակայն, պարզ է դառնում, որ Հեղինակը վարչարարության վարչական և

դատական կարգով բողոքարկման հարաբերակցությունը չի քննարկել միևնույն վարչարարությունը մինչ դատարան դիմելը վարչական կարգով բողոքարկված լինելու դեպքում վարչական բողոքը քննող մարմնի կողմից արձանագրված փաստական եզրահանգումների ու իրավական դիրքորոշումների իրավական բնույթի հարցը՝ այն համատեքստում, թե արդյոք դրանք պետք է պարտադիր լինեն, հաշվի առնվեն կամ, ընդհակառակը, անտեսվեն վարչական դատարանի կողմից գործի հետագա քննության ընթացքում: Կարծում ենք, հետազոտությունն առավել ամբողջական դարձնելու տեսանկյունից հարկ էր այս հարցին անդրադառնալ և առաջադրել համապատասխան լուծում:

4. Ատենախոսության 2-րդ գլխի 1-ին պարագրաֆում Հեղինակը մշակել է վարչարարության բողոքարկման համատեքստում հանրային շահի իրավաբանորեն արժևորման երեք՝ վարչարարության առարկայի, դրա հետևանքների շրջանակի և ազդեցության նշանակալիության, չափանիշները: Այս համալիր մոտեցումը ինքնուրույն և գիտականորեն հիմնավորված եզրահանգում է: Ատենախոսությունից, սակայն, բավարար հստակությամբ չի հետևում, թե ինչպիսի կոնկրետ ապացուցողական միջոցներով և ինչ հարցերին պատասխանելու միջոցով դատարանը պետք է ստուգի այս չափանիշների միաժամանակյա առկայությունը գործնականում՝ հատկապես «ողջամտորեն կարող է առնչվել» (հետևանքների չափանիշ) ձևակերպման մեկնաբանության համատեքստում, որն իրենից անհրաժեշտաբար ենթադրում է որոշակի լայն հայեցողություն: Մինչդեռ՝ հետաքրքիր կլիներ պաշտպանության ընթացքում լսել Հեղինակի դիրքորոշումն առ այն, թե իր պատկերացմամբ ինչպիսի ապացուցողական ստանդարտ պետք է կիրառի դատարանն այս չափանիշների գնահատման համար, որպեսզի կանխվի դրանց չափազանց լայն կամ, ընդհակառակը, չափազանց նեղ մեկնաբանության վտանգը:

5. Ատենախոսության սեղմագրում ներառված անգլերեն և ռուսերեն ամփոփագրերը տարբերակներն ատենախոսության հետազոտության առարկան նկարագրում են առավել ընդհանուր կերպով՝ ներկայացնելով ատենախոսության հետազոտության առարկան, սակայն բավարար չափով չարտացոլելով ատենախոսության կենտրոնական փաստարկն ու հիմնական եզրահանգումները: Մինչդեռ, հաշվի առնելով ատենախոսության իրական գիտական արժեքը և

ուսումնասիրվող հարցերի՝ նաև միջազգային գիտական հանրության համար ներկայացնող հետաքրքրությունը, ատենախոսությունը կշահեր, եթե ամփոփագիրն առավել համարժեք արտացոլեր ատենախոսության հիմնական եզրահանգումներն ու դրույթները:

Վերը ներկայացված նկատառումները չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը. դրանք ունեն առավելապես բանավեճային բնույթ, որոնք կարող են հետագա հետազոտության առարկա դառնալ և որոնց վերաբերյալ նպատակահարմար կլիներ, որպեսզի Հեղինակը պարզաբանումներ ներկայացներ պաշտպանության փուլում:

Ամփոփելով հիշյալ ատենախոսության վերաբերյալ մեր նկատառումները, գտնում ենք, որ ատենախոսության թեման արդիական է, և արդիականությունը հաջողությամբ հիմնավորվել է Հեղինակի կողմից: Ատենախոսությունը հանդիսանում է ինքնատիպ, գիտականորեն հիմնավորված և գործնական նշանակություն ունեցող հետազոտություն, որը լրացնում է հայրենական վարչական իրավունքի գիտությունում ուսումնասիրվող ինստիտուտի առնչությամբ առկա էական բացը: Հեղինակի կողմից առանձնացված գիտական դրույթներն ու եզրակացությունները կազմված են անհրաժեշտ ինքնուրույնությամբ, ինքնատիպությամբ և հիմնավորված են աշխատանքում, ատենախոսությունում առանձնացված պաշտպանության ներկայացվող դրույթները համապատասխանում են գիտական նորույթի չափանիշներին և կարող են օգտակար և կիրառելի լինել ինչպես հետագա գիտական հետազոտություններում, այնպես էլ օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայում: Հեղինակը կատարել է ծավալուն և արդյունավետ աշխատանք, որն աչքի է ընկնում հետազոտության ինքնուրույնությամբ և անհրաժեշտ ինքնատիպությամբ: Ատենախոսությունը պատրաստված է բովանդակային և ձևավորման պահանջներին համապատասխան:

Ատենախոսության հիմնական դրույթները համարժեք ընդգրկմամբ և խորությամբ արտացոլված են ՀՀ ԲԳԿԳ-ի կողմից սահմանված գիտական հանդեսներում հրատարակված հեղինակի թվով 7 գիտական հոդվածում:

Այսպիսով, Էլինա Կարենի Գեղամյանի «Բողոքարկման ինստիտուտը վարչարարությունում և վարչական դատավարությունում» վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական

իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այն համապատասխանում է Կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով սահմանված ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, այդ թվում՝ 6-8-րդ կետերի պահանջներին, ուստի հեղինակին՝ Էլինա Կարենի Գեղամյանին, կարող է շնորհվել ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝

Ի. Գ. Դ., Ք.Գ.Թ., ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«25» հունիսի 2026 թվական

Ի. Գ. Դ., Ք.Գ.Թ., ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Բ.Գ.Թ. Ռ. Ս. ԿԱՍԱԲԱԲՈՎԱ

«26» հունիսի 2026 թվական